

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հայուսական բույր անթերթիստիք,  
միացնելու

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Հ. Ա. Ա. ԽՈՐՃՈՒ Դ 17

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

# ՍԻՓԻԼԻՍ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՄԱՔԱՂԱՔԱՅԻ

616 957  
Մ-49

ԵՎԱՆ  
9 2 5

Ա-49

30

Պատկեռապետ բուժք յիշկըներ,  
միացե՛ք

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. Ս. ԽՈՐՃՐԴԻ № 17

ԲԺ. Ա. ՄԵԼիքյան

= ՍԻՖԻԼԻՍ =

ԵՐԵՎԱՆ

1925

27 JUN 2013

7500/3

## ՍԻՖԻԼԻՈ

ԻՆՉ ՏԵՍԱԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Վեներական ախտերից այժմենավտանգավորը սիֆիլիճն է, վորովիճետե, բացի հիվանդից առողջին անցնելուց՝ նա անցնում է և ժառանգաբար, այսինքն՝ հորից ու մորից անցնում է դեռ չմծրն ված ժառանգին:

Սիֆիլիսը շատ հին հիվանդություն է. մարդիկ սկսեցին ուշագրություն դարձնել նրա վրա միայն սրանից 400 տարի տուած, յերբ Յեվրոպայում ահազին զոհեր տարագի: Առաջ ուրիշ անուն



24338.59

Դրամ 2012.

Տիրամ 5000.

Պատ. № 2831

Տպագր. Տրեստի 2-րդ Տպարան, Ցերեկան


ուներ այդ հիվանդությունը, բայց այժմ  
բոլոր յերկրներում ել ընդունված է  
սիֆիլիս կոչել նրան:

Սիֆիլիսը շատ տարածված հիվանդու-  
թյուն է, վորքան տղետ և ազգաբնակու-  
թյունը, այնքան ել շատ և տարածված  
նրանց մեջ այդ հիվանդությունը.  
Կան այնպիսի տեղեր, վորտեղ 100  
հոգուց 15-ը հիվանդ են սիֆիլիսով. Կան  
և այնպիսի տեղեր, վորտեղ առեն ըն-  
տանիքում դրանով հիվանդ կա:

## ՍԻՖԻԼԻՍԻ ՄԱՆՐԵՆ

Ինչպես բոլոր վարակիչ հիվանդու-  
թյունները, սիֆիլիսն ել ունի իր ման-  
րեն: Այդ մանրեները շատ փոքր են,  
հասարակ աչքով անտեսանելի. խոշորա-  
ցույցով կամ մանրադիտակով 1000  
անգամ և ել ավելի մեծացնելուց հետո  
միայն կարելի յե տեսնել այդ մանրեն,

զորը նման է խցանահանի, միայն յեր-  
կար տեսակի և բարակ պտուտակնե-  
րով: Այդ մանրեն կոչվում է դժգույն  
սպիրոխետ:



Նկ. 1. Դժգույն սպիրոխետներ:  
սիֆիլիսի մանրեներ:

Սիֆիլիսի մանրեն գտնվում է հի-  
վանդի արյան մեջ, նրա մարմնի վրայի

խոցիկների և բշտիկների, արտաթորուառողջի շրթունքի քերծվածքի վրա, կամ  
թյան ու թարախի մեջ. վարակվելուերանի մեջ զանգող մի վորեւ քեր-  
համար անհրաժեշտ է, վոր մանրենչվածքի վրա. դրանից հետո առողջն  
անցնի հիվանդից առողջին. մասնեւնս վարակվելու եւ:  
ընկնում և առողջ մարդի մարմնի մի Նույնակես շատ տարածված եւ ուրիշի  
վորեւ առաջի քերծվածքի վրա ու վաղանակ ծխելը, ուրիշի ծխամորձը (Հե-  
րակում նրան, անցնելով եղ քերծվածքութիւնը) բերան դնելը, ուրիշի գդալով  
քից արյան մեջ:

## ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՍԻՖԻԼԻՍՈՎ

Սիֆիլիսով կարելի յե վարակվել թե  
ունական և թե արտասեռական ուղիով,  
որինակ՝ համբույրի, գդալի, սրբիչի,  
բաժակի միջոցով. հիվանդի բերանում  
կան խոցիկներ և ինքը չը գիտե, վոր  
եղ խոցիկները սիֆիլիսային են. նույն-  
ուհս չը գիտե, վոր իր թուքի մեջ կան  
սիֆիլիսային մանրեներ-սպիրոխետներ.  
Դու համբուրում եւ առողջին. հիվանդի  
թուքից մի կաթիլ կարող եւ ընկնել ա-

Բայց ավելի շատ համբույրի միջո-  
ցով ե անցնում սիֆիլիսը յերեխաներին.  
հայտնի յե, վոր յերեխաների կաշին  
շատ նուրբ եւ և շատ շուտ շուտ

քերծվածքներ եւ ունենում. համոռաելով քորոցներն ու ասեղները, բուկրով, յեթե հիվանդ եւ սիֆիլիսովվարակել ուրիշներին: ընծայի փոխարեն սիֆիլիս եւ տալիս Ծուսաստանում այդ ձեռվ ստացած անժեղ յերեխային: Բայց դա հերիք չեսիֆիլիս շատ կա: սիֆիլիսն անցնում եւ զանազան իրերի Առհասարակ սիֆիլիսով հիվանդների ու գործիքների միջոցով, յեթե նրանց կեսից ավելին արտասեռական ճանապարա ընկել եւ հիվանդի թուքը կառաջարձով եւ հիվանդանում. և այդ տեսակ խոցիկի արտաթորությունը:

Մեզնում հյուսներն եւ կոշկակարները սովորություն ունեն աշխատանքի ժամանակ բերանը մեխեր դնել. մեխի գործարանում կամ միենույն բանատեղում մի վորեւ հիվանդ թողել եր թուքը մեխի վրա. առողջը այդ կեղաս մեխը բերանը դնելիս վարակվում եւ սիֆիլիսով:

Դերձակներն ու կար անող կանայք ել միշտ դնում են իրենց բերանը բուրոց, կամ ասեղ. զբանցից մեկն ու մեկը կարող եւ հիվանդ լինել և, կեղ-

սիֆիլիսն ավելի վասնդավոր եւ այն պատճառով, վոր յերկար ժամանակ նա չի իմացվում: Մինչև անզամ չեն կասկածում այդ տեսակ հիվանդները, վոր իրենք սիֆիլիս ունեն, չեն բըժշկում և հեշտությամբ վարակում ու բիշնորին, մանավանդ իրենց մերձավորներին:

Այդ եւ պատճառը, վոր կան գյուղեր, վորաեղ ազգարնակությունը ամրողացնին հիվանդ եւ սիֆիլիսով:

Հայտատանում եր շնորհիվ վերջին պատերազմի, շատ եւ տարածված սիֆիլիսը. մեզնում ել կան գյուղեր,

վորտեղ ազգաբնակության յերեք քառարդանդում, մեռնում և շատ շուտ  
սորդը տկար և սիֆիլիսով. այդ դյուռվիժվում, յեթե հիվանդությունը շատ  
դերում կան ընտանիքներ, վորոնքուժեղ չե, յերեխան կարող և աճել,  
վիմովին հիվանդ են սիֆիլիսով: և ժամանակին ծնվեր բայց շատ շուտ  
հարկե, մեր դյուռվերում ել հիվանդների մեռնում և ներքին վործարանների սի-  
մեծ մասը արտասեռական ճանապար, ֆիլիսային խանդարութիւնից:

Հով և ստացել եղ հիվանդությունը:  
Այս հանդամանքը ո՞հծ կտպ ունի  
դյուռվացու նիստ ու կացի հետ և դրա  
համար ել այդ տեսակ սիֆիլիսը կեն-  
ցաղային և կոչվում:

## ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄ

Սեռական և վոչ սեռական ուղիով  
ստացած սիֆիլիսը կոչվում և ստա-  
ցական սիֆիլիս, ի զանազանությունն  
ժառանգական սիֆիլիսից, յերբ յերե-  
խան մոր արգանդութիւն և ստանում  
սիֆիլիսը՝ հորից կամ մորից: Ժառան-  
գական սիֆիլիսոտ յերեխան չի աճում

## ՍԻՖԻԼԻՍԻ ՆՑԱՆՆԵՐԸ

### ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

### ԽՄՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

Սիֆիլիսի նշաններն անմիջապես  
չեն յերեսում. վարակվելուց հետո մի  
վորոշ ժամանակ և անցնում և ապա  
հայտնվում ե հիվանդությունը: Վարակ-  
ման որից մինչև առաջին նշանների  
յերեալը կոչվում է սիֆիլիսի գաղտնի  
կամ խմորման չքշան, յուրաքանչյուր  
վարակիչ հիվանդություն ունի իր շըր-

ջանը, վորը յերկար կամ կտրճ և լի-  
նում, նայած հիվանդությանը:

Սիֆիլիսի խմբման շրջանը մոտ 4  
շաբաթ եւ այսինքն՝ վարակման որից  
մինչև առաջին նշանի յերեսը 4 շա-  
բաթ և առում:

Առողջ մարդը ունենում է սեռական  
հարաբերություն մեկ հիվանդի հետ,  
կամ անզգուշաբար համբուրվում է  
մեկ հիվանդի հետ. առողջի քերծված-  
քի վրա ընկնում են հիվանդի թուքի  
հետ և սիֆիլիսի մանրեները, սպիրո-  
խետները, փորոնք շատ շուտ անցնում  
են արյան մեջ. այդ որվանից արդեն  
առողջը վարակված է, բայց նա դեռ  
վոչինչ չի զգում:

Հիվանդության նայտնիելու համար  
անզգության արկազոր է, վոր մի վո-  
րոշ ժամանակ անցնի, վորպես զի ման-  
րեները բազմանան յեւ սկսն ներզու-  
ծել վարակվածի վրա:

Վոչ մի մանրե իւ վիճակի չե իս-  
կույն և յեթ հիվանդություն առաջ  
բերելու, զրա համար վորոշ ժամանակ  
և հարկավոր:

Յեկ սիֆիլիսի մանրեյի սպիրոխետի  
համար այդ ժամանակը 4 շաբաթ եւ:

## ԿՈՇՏ ՇԱՆԿԻ

Խմբման շրջանն անցնելուց հետո  
սպիրոխետի մտած տեղը մի վոքք  
կարմրում է. հետեյալ որը այդ կար-  
մրած տեղում պղուկ ե զոյանում, մի  
շատ հասարակ ու սովորական պղուկ.  
Վոչ ցավում ե զա, վոչ քոր գալիս. մի  
յերկու որից հետո պղուկի վրայի կի-  
պը պղուկում է և տեղը փոքրիկ խոց  
և բացվում:

Յերբեմն այդ խոցն այնքան փոքր,  
այնքան անհշան և լինում, վոր հիվան-  
դը մինչև անզամ չի նկատում, վոր

խոց ունի: Խոցի վրա թարախ չը կա.  
Նրա հաստակը պղնձտղույն կարմիր է,  
իսկ կողերը մաքուր և հավասար. մի  
բան ե միայն նկատելի՝ դա խոցի հա-  
տակի, կողերի և շրջապատի կոշտու-  
թյունն ե, ինչպես կոճիկ՝ աճառ:


Այ նենց զրա նամար ել եղ առաջին  
խոցը, վորը յեվ սիֆիլիսի առաջին նը-  
շանն ե, կոչվում ե կոշտ կամ կարծր  
շանկը, ի զանազանություն փափուկ  
շանկից:

Սիֆիլիսի այդ առաջին նշանը՝ կոշտ  
շանկը, հայտնվում ե այնուեղ, վոր-  
աեղից մտել և նրա մանրեն՝ սպիրո-  
խեալը:

Յեթե հիվանդը սեռական հարա-  
բերության միջոցով և վարակվել շան-  
կը սեռական զործարաների վրա և  
հայտնվում:

Յեթե գցալի, բաժակի կամ ծխա-  
խոտի միջոցով և վարակվել այդ գեղ-

քում շանկը հայտնվում ե շրթունքնե-  
րի վրա, կամ ըերանի մեջ, լիզվի վրա,  
նշագեղօթի վրա:



Նկ. 2 և 3. Կոշտ շանկը  
բթունքի և լիզվի վրա:

Բոլոր հիվանդների շանկները միա-

տեսակ չեն. միայն կոշտությամբ են նրանք միմյանց նման, իսկ մյուս հատկություններով նրանք նման չեն:

Մեկ հիվանդի շանկրը կարող է մեծ  
լինել մյուսինը՝ փոքր, մեկինը կարող  
է կլեպով ծածկված լինել մյուսինը՝  
վոչ, մեկի շանկրը կարող է կեզտու-  
ու, դարշանուա հեղուկ, մինչև անգամ  
թարախ տար, իսկ մյուսի շանկրը՝ վոչ,  
մի խռոքով ինչքան հիվանդ կա, այն-  
քան տեսակ շանկր կա, զբահամար  
ել շատ հաճախ միայն փոքրված բժիշկն  
է կարողանուած ջոկել ու իմանալ թե  
ո՞նչ ինչ շանկր է:

Այդ ե պատճառը, վոր շատ ու շատ  
հիմնագներ չեն նկատում իրենց շահ-  
կը և ժամանակին չեն զիմում բըժշ-  
կին ու չարաչար տուժում են իրենց  
անփութության ու տփառության հա-  
մար:


Շանկրի արտաթորության մեջ կամ

Նըանից վերցըած մի կաթիլ հեղուկի  
մեջ կան սպիրոխետներ, վորոնց տես-  
նելու համար պետք է աբտաթորու-  
թյան կամ հեղուկի մի կաթիլը ման-  
ըադիտակով զննել նախորոք պատրաս-  
տելուզ հետո:

ՀԱՆԳԻ ԸՆԹԱՑՔԸ

ՅԵԹԵ հիվանդը շանկը յերևալուց  
հետո անմիջապես դիմում է բժշկին,  
շատ շուտ առողջանում յե. շանկը  
առողջացած տեղը սպի յե գոյանում,  
վորը յերկար ժամանակ նկատելի յե  
լինում:

Իսկ յեթե ընդհակառակը հիվանդը անփույթ ե գտնվում, ուշ չի դարձնում ու չի բժշկվում, շանկը շեղվում է իր կանոնավոր լինուցքից՝ նա խոր ե լնկնում, մեծանուածական մ ե ցավար, կեղտոտ ու դուրս հեռուկ կամ



թարախ ե տալիս, հիվանդի զբությունը  
որեցոր վատանում է, նաև նիհարում է  
ու գեղում, գլուխը ցավում է, ախոր-  
ժակից զրկվում, ուժերն այնքան են  
պակասում, վոր ծանր հիվանդի կեր-  
պարանք ե ստանում և անկողին մըտ-  
նում:

Հասարակության մեջ տարածված ե  
այն սխալ կարծիքը, վոր շանկրի կա-  
նոնավոր չք բժշկվելուց, կամ նրան ան-  
փույթ վերաբերվելուց ե հիվանդու-  
թյունը փոխվում սիֆիլիսի:

Շատ հիվանդներ ել այն կարծիքի  
յեն՝ թե բժիշկն ե մեղավոր այն բանում,  
վոր շանկրը սիֆիլիսի յե փոխվել-  
նրանց կարծիքով յեթե բժիշկն ու-  
ղենար, կամ յեթե նա լավ բժշկեր,  
շանկրից հետո սիֆիլիս չեր լինի:  
Բայց դա սխալ է:

Սիֆիլիսը շանկրի յերեկալոց և շա-  
բաթ առաջ ե մտել հիվանդի մարմինը.

Հիվանդը և շաբաթ առաջ ե վարակվել:  
Սիֆիլիսը արյան հիվանդություն է,  
առա ուրեմն և ընդհանուր կազմվածքի  
հիվանդություն ե և վոչ տեղական:

Շանկրը սիֆիլիսի առաջին նշանն է,  
յերբ կա շանկր, կը նշանակե հիվանդն  
ոնի սիֆիլիս, վորը նենց շանկրով ե  
այստեղում:

Շանկրը սիֆիլիսի առաջին փուլի  
նշանն է, վորը նայունվում և իիվանդու-  
թյան խմումնեն շըշանն անցնելոց նե-  
տու:

Յեթե հիվանդը հենց շանկրն յերեա-  
լու որից ե բժշկվում, ամեն բան հենց  
շանկրով ել վերջանում է. իսկ յեթե  
չի բժշկվում, վոչ մի կերպ չի կարելի  
սիֆիլիսի առաջն առներ վորովհետեւ  
սիֆիլիսը սկսվում ե նենց վարակման  
որից:

Վերոզբյալ սխալ կարծիքը մեծ թյու-

րիմացություների պատճառ և գառնում  
ու ցավալի հետեամբներ տալիս:

## ԱՎՇԱՅԻՆ ԳԵՂՁԵՐԻ ՈՒՐԵԼԸ

Կոշտ շամկրի յերեալուց մի քանի  
որ հետո մոտակա զանգող գեղձերն  
սկսում են ուռել և մեծանալ, բայց  
առանց ցավի և շատ ել դանդաղ:

Միֆիլիսի մանրեն կաշվի քերձված-  
քից մտնում է հիվանդի արյան մեջ  
տվշային անոթների և գեղձերի միջու-  
ցով. ավելի հեղուկ ե, վոր յուրաքան-  
չյուր կենդանի ունի. այդ հեղուկը  
հավաքվում է մարմնի զանազան մասե-  
րից, լցվում է բարակ անոթների մեջ.  
որանք ել մեծերի մեջ ու հետո խառ-  
նվում են արյան հետ. Ավշային հեղու-  
կը, նախ քան արյան մեջ թափվելը՝  
անցնում է գեղձերի միջով. գեղձերը  
մարմնի լինքնապաշտպանության հա-

մար են. ավշային հեղուկը իր միջի  
կեղանոտ և թունավոր մանրեները թող-  
նում ե զեղձերի մեջ, մաքրվում ու  
հետո թափվում արյան մեջ:

Առհասարակ մարզի մարմնի մի վորհե  
աեղ վարակիչ խոց յերեալիս մոտակա  
գեղձերն ուռում են:

## ՄՈՏԱԿԱ ԳԵՂՁԵՐԻ ՈՒՐՈՒՄԸ

Միֆիլիսի ժամանակ ել գեղձերն ու-  
ռում են, միայն այն զանազանու-  
թյամբ, վոր այս վեպում ուսում են մի  
քանի զեղձեր միասին յեվ բնույնում են  
նամրիչի սեսը. և այս բանը այնքան  
բնորոշ է, վոր հենց միայն ևս նշանի  
հիման վրա առանց կասկածելու պետ-  
քէ ընդունել յերեացած շանկը սի-  
ֆիլսային շանկը և սկսել սիֆիլիսին  
հասուկ բժշկությունը:

Վոչ մի հիվանդության դեպքում գեղ-

Ճերը համբիչի տեսք չեն ընդունում: Յերը առնանգամի վրա կա խոց ու աճուկի գեղձերն ել մեծացել են, չեն ցավում, չեն թարախուսում, համբիչի ձեփ յեն, կը նշանակե, վոր սիֆիլիսի նատ զործ ունենք, վոր հիվանդն անկառած սիֆիլիս ունի:

Բացի այդ, չը պետք է՝ մոռանալ և հետեւալ հանգամանքը. վորտեղից մըտել և սիֆիլիսի մանրեն՝ այդ տեղի մոռակա գեղձերն ել ուսում են:

Յեթե մանրեն ընկել և սեռական գործարանների վրա, շանկը սեռական գործարանների վրա յե և ուսում են աճուկների գեղձերը. յեթե շանկը սեռական գործարանների աջ կողմումն ե, ուսում են աճուկի գեղձերը, յեթե շանկը ձախ կողմումն ե, ուսում են ձախակողմյան աճուկի գեղձերը. յեթե շանկը մատի վրա յե, ուսում են

միհնույն ձեռքի արմունկի կեղձերը, յեթե շանկը բերանի մեջն ե, ուսում են ներքին ծնոսի տակի գեղձերը. յեթե շանկը թշի կամ շրթունքի վրա յե, ուսում են պարանոցի միհնույն կողմի գեղձերը. բայց յեթե շանկը ձափի կողմումն ե լինում, իսկ ուսում են աջ կողմի գեղձերը, սա կոչվում է խաչածե ուսումն, վորը շատ քիչ և պատահում կոշտ շանկի ժամանակ:

## ՆԵՐԻՆ ԸՆԿԱԾ ԳԵՂԶԵՐԻ ՈՒՐՈՒՄԸ

Մի ուրիշ հատկությունն ել ունեն սիփիլիսով հիվանդի գեղձերը. դա նա յե, վոր սիփիլիսով հիվանդի մարմնի ուրիշ տեղի գեղձերն ես ուսում են և այդ գեղձերը յերկար ժամանակ ուսած են մնում. հիվանդությունը հինացել ե, հիվանդը վաղուց ե հիվանդ. թե կաշվի վրա և թե մի ուրիշ տեղ հիվանդութ-

յան հետք չկա, միայն գեղձերն են մեծացած. և սա ցույց ե տալիս, վոր հիվանդը տկար ե, կամ յերբեիցե յեղել ե տկար սիֆիլիսով:

Բանը նրանումն ե, վոր քանի հիվանդությունը նոր ե, ուռում են վարակված տեղի մոտ գանվող գեղձերը. իսկ յերբ հիվանդությունը հնանում է, հիվանդի մարմնի բոլոր գեղձերն ել ուռում են, յերկար ժամանակ մնում են ուռած և մատնում հիվանդին:

Բոլոր գեղձերի ուռումը նոյնպես ըլնորոշ և սիֆիլիսի համար:

Յեթե մեկն ու մեկի բոլոր գեղձերն ուռած են, անզատճառ պետք ե նրան հարց տալ, չի ունեցել արդյոք, կամ չունի հենց այժմ սիֆիլիս. յեթե նա բացասի, պետք ե առաջարկել նրան արյունը կամ վողնուղեղի միջի հեղուկը հետազոտել տալ:

Յերբ բացասական հետևանքը տա այդ

հետազոտությունը, այն ժամանակ կարելի ե հավատալ նրան. իսկ յեթե այդ հետազոտությունը տվեց ընդհակառակը դրական հետևանք, այն ժամանակ հիվանդը պետք ե անմիջապես սկսի բըժշկելը, վոր չը տուժի ապագայում:

## ՈՒՐԱԾ ԳԵՂՁԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սիֆիլիսի հատկությունն այն ե, վոր նո կարող ե յերկար ժամանակ թագուհիած մնալ և 5 տարուց կամ 10 տարուց հետո զաղտապողի ձեռվ հայտնվել և ահազին քայլայումներ ու վնասումներ տալ:

Կանոնավոր և լավ բժշկվելու գեղձը բռն գեղձերի ուռումն անհետանում ե և գեղձերը չեն շոշափվում:

Ապա ուրեմն յուրաքանչյուր հիվանդ պետք ե ունենալ այն գիտակցությունը և բժշկվի, վոր գեղձերի ուռումն ան-

հետանա. հակառակ պարագայում նրա հիվանդությունը յերկար և շարունակվելու, առաղայտում դժվար ե բժշկվելու և այդ հիվանդը միշտ ել վտանգ և սպառնալու իր շրջապատողներին և մերձավորներին վարակելու տևոտիւթից:

Յուրաքանչյուր հիվանդ պետք է շուտ-շուտ քննել առ իր արյունը, վորպես զի ինքը հավաստիացած լինի իրոք ինքը առողջ է, թե տկար:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՓՈԽ

### ՅԵՐԿՐՈՐԴ ԽՄՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

Կոշտ շանկը սիֆիլիսի առաջին շրջանն է կամ փուլը: Շանկի առողջանալուց մի վորոշ ժամանակ անցնելուց հետո յեն հայտնվում յերկրորդ շրջանի (փուլի) նշանները: Ինչպես վոր կոշտ

շանկը առաջ յեղած ժամանակը կոչվում է խմորման շրջան, այսպես ել կոշտ շանկը հետո մինչև յերկրորդ շրջանի նշանների յերեալը յեղած ժամանակն ել կոչվում խմորման շրջան: Ե ընդունված է այս ժամանակը անվանել յերկրորդ խմորման շրջան:

Այս շրջանն ել տեսում է մոտավորապես 4 շաբաթ: Բայց յերեամն և ուշ ե հայտնվում:

Յերեամն պատահում է, շանկը շուտ չի առողջանում, յերկար և քաշում: այդ ժամանակ յերկրորդ փուլի նշանները շուտ են գալիս և յերկրորդ խմորման շրջանը աննկատելի յե անցնում:

Ըստհանրապես յերկրորդ փուլի նշանները յերեամն են գալիս շանկի առաջանալուց մի վորոշ ժամանակ անցնելուց հետո:

Շանկի առողջանալուց հետո հիվան-

որ մի առ ժամանակ իրեն շատ լավ է  
զգում, նույն իսկ այնքան լավ, վոր նա  
մինչեւ անգամ չի հավասար, վոր իր  
խոցը կոշտ շանկը եւ յեղեւ բանն ել  
հենց նըստումն ե, վոր շանկըն առող-  
ջանում ե, իսկ իվանդը վու հիվանդու-  
թյունը լոել ե միայն ժամանակավորա-  
պես և իր ժամանակին հայտնվելու յէ:

## ՍՊԻՐՈԽԵՏՆԵՐԻ ԲԱԶՄԱՆԱԼԸ

Շանկրից հետո սպիրոխետները, ոի-  
ֆիլիսի մասրեները, ավշային մոտակա-  
ռուած գեղձերից անցնում են արյանը,  
եզ սպիրոխետները արյան հետ արջում  
են հիվանդի մարմինի մասերը, կիսվում  
են այս ու այն մասի մեջ, որինակ՝  
կաշվի, բերանի, ներքին գործաբան-  
ների մեջ հսկում են աճել ու բարձրա-  
նալ:

Քանի քիչ են նրանք, միայն շանկը

են առաջացնում, բայց աճելուց ու  
բազմանալուց հետո նրանք վողովում  
են ամբողջ արյունը և թունավորում  
ամբողջ կաղմվածքը, ահա և այդ ժա-  
մանակամիջոցը, յերկրորդ խմորման  
շրջանը, սպիրոխետների բազմանալու և  
ընդհանուր կաղմվածքի վարակելու հա-  
մար ե:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՆՇԱՆԵՐԸ

Յերկրորդ փուլի նշաններն ամենեին  
կախում չունեն շանկրից: Մեծ եր, թե  
փոքր շանկը, յերեսում եր նա, թե բո-  
լորովին աննկատելի յեր, միենույն ե,  
հայտնվելու են յերկրորդ փուլի նշան-  
ները շուտ կամ ուշ:

Այդ նշանների հայտնվելուց մի քա-  
նի որ առաջ հիվանդն սկսում է տա-  
քացնել, գլուխը ցավում ե, մարմինը  
կոտրտվում, արամազրությունը վատ ե,  
աշխատել չի կարսպանում:

## ԲՇԵՐ ՅԵԼ ԲՇՏԻԿՆԵՐ

Յերեք որից հետո հիվանդը իր կաշ-  
վի վրա նկատում է ինչ վոր բծեր ու  
պուտեր, գրանք կարմբագույն են, քոր  
չեն զալիս, կաշվից բարձր չեն ու չեն  
անհանդասացնում հիվանդին:

Մի քանի որից հետո այս բծերն ու  
պուտերն անցնում են կամ սրագում,  
այնպես վոր հաճախ հաղիվ նշմարելի  
յեն լինում:

Դեռ դրանք չանցած, հիվանդի մար-  
մի զանազան տեղերում կաշվի վրա,  
բերանի մեջ բթի մեջ, բկի ու կոկոր-  
դի մեջ հայտնվում են զանազան մե-  
ծության բշտիկներ, վոքոնք ծածկված  
են բարակ կլեպնվ, այդ կլեպը շատ  
շուտ պոկ է զալիս և բշտիկը խոցիկի  
և փոխվում: Մի քանի որից հետո դրանք  
չորանում են ու տափականում, բայց  
նորերն են զուրս զալիս:

Այդ բշտիկները զանազան մեծու-  
թյան են, մի քանիսը կորեկի շափ են,  
մի քանիսը վոսպի, մի քանիսն ել սի-  
սերի, զրանց մի մասը չորացել ե, իսկ  
մյուսն ել նոր և զուրս զալիս: Այս-  
պես վոր միհնույն ժամանակ մի հի-  
վանդի վրա կարելի յետեսնել բազմա-  
տեսակ նշաններ, բծեր, բշտիկներ,  
խոցիկներ, մանր կոշտուիներ:

Յուրաքանչյուր տեսուին իր սիրած  
տեղն ունի մտրմի վրա, որինակ՝ բը-  
ծերն ու պուտերը զուրս են զալիս  
փորի, կողերի և կրծքի վրա. բշտիկ-  
ները ձականի վրա մազերի մոտ, իսկ  
խոցիկները գլխի մազերի և հոնքերի  
մեջ:

Յերեմի բծերն ու պուտերը, խոցիկ-  
ներն ու բշտիկներն այսքան քիչ են  
լինում, վոր միայն փորձված բժիշկը  
կարող է ջոկել՝ ինչ են զրանք: Ծառ  
անզամ բշտիկները զուրս են զալիս

մարմնի այնպիսի տեղերում, վորոնք  
կլզում են միմյանց, որինակ, սեռա-



Նկ. 4. Խոցիկներ և բշտիկներ  
յերեսի վրա:

կան գործարանների վրա, փոշտի վրա-  
ազգըների վրա, շեքի վրա, կոնա-  
տակին, կանանց ստինքների տակ  
(ծծերի) և այլն... Յերբ այդ  
բշտիկները դուրս են գալիս ԱԲ-  
թունքների վրա կամ բերանի անկյու-  
նում, թուքից ավելի գոգուկում են ու  
շատ անհանգստացնում հիվանդին. կան  
այնպիսի բշտիկներ, վորոնք գարշահոտ  
հեղուկ են արտադրում. այդ հեղուկը  
յերբեմն շուտ չորանում և բշտիկի  
վրա, բայց յերբեմն ել գոգուում ե  
բշտիկի շուրջը գտնվող առողջ կաշին  
և նոր բշտիկների պատճառ դառնում:

Բշտիկների տեղուիք յեվ խոցիկների  
թարախի մեջ միշտ ել կարելի յե զբո-  
նել սիֆիլիսի ժանրեներ՝ սպիրոխետ-  
ներ։

Բշտիկները դուրս են գալիս վոչ մի-  
այն կաշվի վրա, այլև բերանի, քթի  
մեջ, բկի և կոկորդի մեջ. հայտնվելով

այս վերջին տեղերում, բշտիկները գտնաղան խանդաբարութիւներ են տառաջ բերում, վորոնք չեն անցնում, մինչեւ վոր հիվանդը չի սկսում կանոնավոր բժշկվելը:

Իսկ յեթե հիվանդը կանոնավոր բժշկվում է, անց կոշտ շանկերից ևսու, այն ժամանակ սիֆիլիսի յերկրորդ փուլի նշաններից վոչ մեկն ել չի յերեսում, և հիվանդը ազատ է լինում այդ նշանների հասցրած խանդաբարումներից և պատճերից:

## ՄԱԶԵՐԻ ԹԱՓՎԵԼՆ ՈՒ ՎՈՍԿՐԱՄԻՉԻ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ

Յերկրորդ արջանի գվազավոր նշաններից մեկն ել հիվանդի մաղերի թափվելն եւ և ուժեղ վոսկրացավը, այս վերջինն առաջ եւ դալիո վոսկրուների վրայի թաղանթի բորբոքումից:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ՆՇԱՆՆԵՐԻ ԶԱՐԴԱՆԱԼԸ

Շատ քիչ հիվանդներ կան, վորոնք սկսում են բժշկվելը հենց կոշտ շանկրից հետո. միայն յերկրորդ շրջանի նշաններն են սախազում բժշկվելը, այդ ժամանակ ինքը հիվանդն ել հավատում է, վոր ուկար եւ սիֆիլիսով և սկսում ե կանոնավոր բժշկվելը: Յերբ հիվանդն անփույթ ե վերաբերվում, յերկրորդ շրջանի նշանները գնալով զարգանում են և զանազան խանդաբարումներ տուաջ բերում, նայած թե մարմնի վոր մասն և ավելի վնասված. յեթե կորդն ե վնասված, հիվանդի ձայնը բոլորովին կարգում է, յեթե մազերն են վնասված, գլխի մազերը թափվում են և հիվանդը ճաղատանում է. նա այլանդակ կերպարանք եւ ստանում, յերբ թափվում են հոնքերն ու արտե-

վանունքները։ Յեթե վոսկրամիզն ե  
մասաված, վոսկրացավը հանգստություն  
չի տալիս հիվանդին։

Ինչպես վոր չի կարելի իմանալ՝ թե  
վորքան ժամանակ կարող ե տեսել կոշտ  
շանկը, նույնպես ել չի կարելի իմա-  
նալ՝ թե վորքան ժամանակ կարող ե  
տեսել և յերկրորդ շրջանը։

Հսգհանրապես յերկրորդ արջանը  
տեսում ե շատ յերկար տարբիներ, հիվան-  
դությունը յերբեմն թագնվում է ու  
անհետանում, յերբ բժշկվում ե հիվան-  
դը, և մի առ ժամանակից հետո դարձյալ  
հայտնվում, յեթե հիվանդը կանոնավոր  
չի բժշկվում. իսկ ընդհակառակը յերբ  
հիվանդը բժշկվում է կանոնավոր, այդ  
նշաններն անհետանում են անդարձ  
կերպով։

ՀԻՎԱՆԴԻ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Եյս շրջանի ամբողջ ընթացքում  
հիվանդը սաստիկ վարակիչ է. նա շատ  
հեշտությամբ կարող է վարակել իր  
շրջապատողներին ու մերձավորներին։

Վարակելու տեսակետից ամենա-  
վտանգավորը յերկրորդ արջանն է,  
վորովհետեւ այդ ժամանակ սպիրոֆիետ-  
ները մի առանձին հատկություն ունեն  
թե վարակելու և թե աճելու ու բազմա-  
նալու։

Յուրաքանչյուր հիվանդ պետք է  
այնքան գիտակցություն ունենա, ոկանը  
բժշկությունը հենց կոչտ շանկրից յեկ  
բժշկվել կանոնավոր ծեփով յեկ շապասել  
յերկրորդ շրջանի նշանների յերեվալուն։  
Շատերն սպասում են յերկրորդ արջանի  
նշանների յերեալուն, կամ բժշկվում  
են միայն այն ժամանակ, յերբ նշան-  
ները դուրս են գալիս և դադարեցնում

են բժշկությունը, յերբ նրանք տնհետանում են:

Յուրաքանչյուր հիվանդ պետք է բժշկի վոչ թե միայն իր կողցրած առողջությունը ձեռք բերելու համար, այլ և նրա համար, վոր նրա արյունը մաքրվի, վոր չփարակի ուրիշներին և չանբախտացնի նրանց:

Ժառանգներին անցնելու տեսակետից ել այս շրջանի սիֆիլիսը նոյնպես վտանգավոր է, յերկրորդ շրջանի սիֆիլիսով հիվանդները միշտ ել ունենում են սիֆիլիսով հիվանդ ժառանգներ, վորոնք հենց մոր արգանգում մեռնում են և վիժվում կամ ծնվում են սիֆիլիսային բշտիկներով ու խոցիկներով և շատ շուտ մեռնում: Քանի կատարեալապես չի բժշկվել հիվանդը, նա միշտ ել հիվանդ զավակներ և ունենալու, վորոնք շուտ մեռնելու յեն:

Սիֆիլիսի պատճառով քայլայվում են նոտանիքը յեկ այլասեռովում:

## ՅԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ ԿԱՄ ԳՈՒՄՄԱՆԵՐԻ ԾՐՁԱՆ


### ՅԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Հիվանդի կաշվի վրա, քթի և բերանի մեջ, բկի և կոկորդի մեջ, ստամոքսի և աղիքների մեջ, մկանունքների և վոսկուների մեջ, արյան մեծ զարկերակի և սրաի մեջ և առասարակ բոլոր գործարանների մեջ, նույն իսկ զլիսի ուղեղի և վոզնուղեղի մեջ հայտնվում են վոքրիկ ուսուցքներ, վորոնք սկզբում կոշտ են լինում, բայց հետո փափկում են և լցվում թարախունման թանձը հեղուկով:

Մի առ ժամանակից հետո այդ ուսուցքները ողատովում են և զանազան

խանգարումներ առաջ բերում, նայած  
թե վոր գործարանի մեջ են գոյացել  
նրանք:

Վորտեղ գոյանում են այդ ուսուցք-  
ները, այն գործարանը խոցուվում  
ե ու պատովածներ տալիս. որինակ  
յեթե այդ ուսուցքը բերանի մեջն ե,  
քիմքի վրա, շատ շուտ քիմքը պատո-  
վում ե և ըթի խոռոչն ու բերանը  
միանում են: Յեթե քթի վրա յե զուրս  
յեկել այդ ուսուցքը, քիթը շատ շուտ  
նստում ե ու տգեղացնում հիվանդին,  
կամ բոլորովին բաց ե մնում քթի տեղը  
և հիվանդը զառնում է պնչատ. յեթե  
սրտի մեջ ե զոյացել այդ ուսուցքը,  
սիրտը շատ շուտ պատովում ե և հի-  
վանդն անմիջապես մեանում, հանկար-  
ծամահ ե լինում:



Նկ. 5. Քթի վոսկոսների  
սիֆիլիտային խոց:



Նկ. 6. Սիմիլիսալին խաչ  
քթի վագուկ մասերի վրա:

Այդ ուսուցքը լսալիներն ուսումնա  
յե կոչվում և զբա անունով ել էսչփում  
և յերրորդ փուլը՝ գումաների շրջան:  
Այդ գումաների պատճառը հետեւան  
ե՝ սպիրոֆետները կիսվելով մի վորեն  
գործարանում, բուն են դնում այդտեղ

և ուսուցքներ տուաջացնում. գործա-  
րանը խոցոտվում ե և զանազան քայ-  
քայումներ տուաջ բերում հիվանդի  
մարմնի մեջ:

Գլխի ուղեղի մեջ գոյացած ուսուցք-  
ները ամենից վտանգավորն են, գորով-  
ճեակ գլխի ուղեղի մեջ են զետեղված  
մարդու մարմնի բոլոր գործարանների  
կառավարող տեղերը, վորոնք կենտրոն  
են կոչվում. վար գործարանի կենտրոնը  
վնասված ե, այն ել խանգարվում ե.  
յեթե աչքի կենտրոնումն ե գուրս յե-  
կել այդ ուսուցքը, հիվանդը կզրկվի  
տեսողությունից, յեթե տկանջի կեն-  
տրոնումն ե գուրս յեկել հիվանդը  
կզրկվի լսելուց:

Բոլոր գործարանների մեջ ել կարող  
են գոյանալ այդ տեսակ ուսուցքներ:

ԳԼԽԻ ՈՒՂԵՂԻ ՅԵՎ ՎՈՂՆՈՒՂԵՂԻ  
ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերբորդ շրջանում գլխի ուղեղի և  
գողնուղեղի մեջ բացի գումաներից,  
վերը նկարագրած ուսուցքներից, ա-  
ռաջ են դալիս և զուտ ներքային հիվան-  
դություններ։ Այդ ժամանակ ուսուցք-  
ներ չեն լինում, այլ գլխի ուղեղը  
սկսում է լավ չգործել, նա կամաց  
կամաց թուլանում է, պակասում և  
հիվանդի հիշողություննը։ մտավոր  
ընդունակությունները որեցոր պա-  
կասում են. գլխի ուղեղի այդ տկարու-  
թյունը զնալով ավելի զարգանում է.  
հիվանդը զրկվում է հասկացողու-  
թյունից. նա դառնում է կատարյալ  
կենդանի գիտակ. հիվանդի կենդանու-  
թյունը միայն ուտելիսելու մեջն է,  
մնացածը նա չի հասկանում, չի գիտակ-

ցում. մնացածը նրա համար զոյտ-  
թյուն չունի, մեռած և նրա համար։  
Այդ տեսակ հիվանդների միակ փըր-  
կությունը մանեւ, վորովնետիվ թժշկու-  
թյուն չկա:

Իսկ վողնուղեղի տկարությունը վողն-  
ուղեղի ստորին մասի (գոտկատեղի-  
մասի) փառւմն է, ավելի շուտ չորուկը,  
վորն ուղևելի կոչվում և ըստհայ  
սухուկա:

Այս տեսակ հիվանդի մարմնի ստորին  
մասի գործարանները բալսին ել խան-  
դարվում են. հիվանդը չի կարողանում  
քայլել, ազատ միզել. նրա վոանները կամ  
փորի միջի գործարանները յերբեմն  
սաստիկ ցավում են և սաստիկ տանջում  
հիվանդին:

Յերկու տկարություններն ել՝ գլխի  
ուղեղինը և գողնուղեղինը, անբուժելի

յեն և մատնում են հիվանդին սոսկալի  
տանջանքների:

## ԶԱՆՍՉԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

Բոլոր հիվանդներն ել չեն տառա-  
պում նկարագրած վասումներից. մեկի  
զիսի ուղեղն ե տկարանում, վորից նա  
ցնորվում ե. մյուսի վողնուղեղն ե  
չորուկ ստանում. յերրորդը տեսողու-  
թյունից ե զրկվում, չորրորդը սրափ արա-  
տից ե հանկարծամահ լինում:

Այդ գանազանությունը բացատրվում  
է հետեւյալով:

Յուրաքանչյուր մարդ ժառանգում է  
իր ծնողներից նրանց գործարանների  
պակասությունները. ում ծնողները  
թույլ թոքեր են ունեցել, նրա թոքերն  
ել թույլ կյինեն. ում ծնողները թույլ

սիրու են ունեցել, նրա սիրուն ել ե  
թույլ:

Այդ պակասությունները ժառանգա-  
կան պակասություններ են. բայց կան  
մարդիկ, վորոնք ծնողներից ստացել են  
առողջ գործարաններ, բայց վիշտը ել  
են, թուլացրել են նրանց իրենց վատ  
նիստ ու կացով, անբարոյական կյան-  
քով, արբեցողությամբ:

Այս վերջին պակասությունները  
ստացական պակասություններ են:  
Սիֆիլիսի մանրենները արյան հետ շրջա-  
գայելով հիվանդի մարմար դանագան  
մասերը, կանգ են առնում նախ և առաջ  
այն մասում, վորն ամենից թույլ ե.  
այդաեղ նրանք կիսված են, բայն դնում  
ե զանազան խանգարումների պատճառ  
դառնում:

Ժողովրդական առածն առում ե՝  
«վորտեղ բարակ ե, այնտեղ ել կտրվում  
ե». սիֆիլիս ու նարվածում ե զոր-

ծարաններից ամենաթույլը, նա քայլացում ե առողջությունը, մինչև վոր վնասում է կյանքի համար կարևոր գործարաններից մեկն ու մեկը, վորից և մեռնում ե հիվանդը. կամ մի այլ հիվանդությունից վախճանվում ե նա ու ազատվում ցավի ճանկերից: Այն հիվանդը, վորը կանոնավոր բժշկվել ե, այդ իանգարումներից ազատ ե, իսկ ով չի բժշկվել կամ բժշկվել ե կիսատ, միշտ ել պետք ե սպասի, վոր մեկ որ սիֆիլիսը հարգածելու յե իրեն, սւասի յուրաքանչուր հիվանդ պետք ե բժշկվի իր ժամանակին, վոր ազատ լինի յերրորդ շրջանի վնասներից:

### ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սիֆիլիսի յերկրորդ և յերրորդ շրջանի զանազանությունը կայսնում

ե նրանում, վոր յերկրորդ շրջանի հիվանդը սասափիկ վարակիչ ե, նա կարող ե վարակել ամենքին, ում նետ շփում ունենա. նա կարող ե փոխանցել հիվանդությունը ժառանգաբար, և ժառանգը նույն խանգարումները կունենա, ինչ վոր սեռական ուղիով վարակվածը... մի խոսքով յերկրորդ շրջանի հիվանդը թունավոր ե, իսկ յերրորդ շրջանի հիվանդը վարակիչ չե, այդ շրջանում սպիրոխետները կորցնում են իրենց ուժը և վարակելու ընդունակությունը:

Սիֆիլիսը վարակում ե միայն ոռողջին և յերկրորդ շրջանում, իսկ յերրուցավ յերրորդ փուլը, նա ել վարակիչ չե, թեև նորագույն գրականության մեջ հիշատակված են և այդ շրջանում վարակման դեպքեր:

## ՍԻՖԻԼԻՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Սիֆիլիսն ընթանում է զերք նկատադրածի պես, բայց յերբեմն զանազան հանգամներից նրա ընթացքը վատանում է:

### ԻՆՉԻՑ ԿԱՐՈՂ Ե ՎԱՏԱՆԱԼ ՍԻՖԻԼԻՍԸ

1) Հասակ: Սիֆիլիսի ընթացքի վրա մեծ աղղեցություն ունի հիվանդի հասակը, ընդհանուր կազմվածքը և նրա նիստ ու կացը. յերիտասարդ հիվանդի սիֆիլիսը թեթև և անցնում, իսկ ծեր հասակում փարակվածներինը՝ շատ ծանր. ծերության զառամութունը խանգարում է հիվանդին կոլիզ մղել և հաղթել հիվանդությունը. ծերության հասակում կազմվածքի խմբնապաշտպանություն միջոցները թուլացած են, ուստի և հիվանդությունը հաղթում է. այնպես վոր ծերության հասակում, որինակ՝

հիսուն տարեկան հասակում ստացած սիֆիլիսը շատ վատ և շատ ծանր ընթացք է ունենում:

2) Ուժմ կազմվածքը թույլ է, ոչ ուրիշ հիվանդություններ, որինակ թոքախտ, ունի, նրա սիֆիլիսն ել շատ ծանր և ընթանում և շատ շուտ գետին դորում հիվանդին:

3) Նույնպես ծանր և ընթանում նրանց սիֆիլիսը, վորոնք քայլայիլ են իրենց առողջությունը հարբեցությամբ, զանազան զվարճությունների պատճառով անքուն զիշելներով, թուլացքել են իրենց կազմվածքը անառակ և անբարոյական վարքով...

Այս բոլորի կազմվածքը զրկվել են ինքնապաշտպանության միջոցներից և ի վիճակի չե զիմապրել սիֆիլիսին:

4) Ցուրտ յերկրում ապրողի և վատ մնունգ ու վատ բնակարան ունեցողի սիֆիլիսն ել ծանր և ընթանում:

ՍԻՖԻԼԻՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՐԻՇ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Կան հիվանդություններ, վորոնց վրա սիֆիլիսը շատ վատ ազգեցություն է թողնում, այսինքն ծանրացնում են բանց:

1) Սիֆիլիսով հիվանդի թոքերի բորբոքումը շեղվում է իր կանոնավոր բնթացքից և շատ շուտ մահվան պատճառ դառնում:

2) Սիֆիլիսով հիվանդի բծավոր սիֆին ավելի ծանր և անցնում, քան նրանը, ով չունի սիֆիլիս:

Ինքը սիֆիլիսը հազվագյուտ դեպքերում է մահվան պատճառ դառնում. բայց այնպէս և քայլքայում հիվանդի առողջությունը, վոր տկարը ուժ չի ունենում դիմանալ ամենահասարակ

հիվանդություններին անդամ, իսկ լուրջ հիվանդությունները միշտ եւ մահով են վերջանում:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍ

ԻՆՉ ԲԱՆ Ե ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԸ

Ժառանգաբար անցնում է յերկրորդ շրջանի սիֆիլիսը:

Սիֆիլիսով հիվանդ ամուսինների զավակը նույնպես հիվանդ է լինում սիֆիլիսով. չը ծնված զավակի վարակումը կոչվում է ժառանգական սիֆիլիս. ժառանգը կարող է վարակվել սիֆիլիսով իր ծնողներից յերկու տեսակ.

1) Հայրը և մայրը հիվանդ են սիֆիլիսով ու գոյացնում են սիֆիլիսով հիվանդ զավակ, վորը հիվանդ և սիֆիլիտը մնաց իր սաղմնափորթան որից:

2) Ծնողները սիֆիլիսով հիվանդանում են ժառանգի ստղմակորումից հետո. ժառանգը գոյացել ե ծնողների տաղջ ժամանակ. հայրը տկարանում ե սիֆիլիսով և վարակում իր հզի կնոջը, վորից յել վարակվում ե արգանդում գոնավող զավակը:

## ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ ՆՇԱՆԵՐՆ ՑԵՎ ԸՆԹԱՑՔԸ

Սիֆիլիսով հիվանդ յերեխան արգանդի մեջ չի աճում, շուտ մեռնում և և վիժվում:

Սիֆիլիսով հիվանդ նոր կանացից  $90^{\circ}/\circ$ -ը վիժում և նղիտթյան կեսը ըլլացած, կառ ծնում նասած, բայց մեռած զավակ.

Այն կինը, վորը հաճախ վիժումներ և ունենում կամ մեռած զավակներ և

ծնում, միշտ եւ կասկածելիյէ սիֆիլիսի տեսակետից. և իրոք արյան քննությունը հաստատում ե, վոր այդ կինը հիվանդ և սիֆիլիսով. Առողջ յերեխան ունենալու համար այդ կինը յերկար ժամանակ ու կանոնավոր պետք բժշկվի:

Յեթե հիվանդությունը սաստիկ չե, կենդանի յե ծնվում յերեխան, բայց սիֆիլիսի նշաններով. նորածնի վրա կան բշտիկներ, խոցիկներ. վոսկորներն ու մկանները լավ չեն զարգացած. այդ տեսակ յերեխան միայն մի քանի որ և ասպրում և շուտ մեռնում ե:

Ժառանգական սիֆիլիս ունեցող յերեխաններից շատ քչերն են համառում 6 ամսական հասակի:

Յերբեմն յերեխան ծնվում է արտաքուստ առողջ, բայց շատ շուտով հայտնվում են սիֆիլիսի նշանները, իսկ և իսկ այնպես, ինչպես մեծերինը

և շատ շուտ զլորում հրան դերեղման:

Ժառանգական սիֆիլիտով հիվանդի յերեխանեղից 90% ը մեռնում են: Ժառանգական սիֆիլիտը կարող է յերեվալ հիվանդ յերեխայի վրա և ավելի ուշ, նայած թե ծնողների հիվանգությունը ինչ գրության մեջ է, որինակ՝ յեթե ծնողների հիվանդանալուց հետո շատ ժամանակ ե անցել մինչև զավակի սպղմափորումը, այն ժամանակ յերեխայի հիվանգությունը կարող է հայտնվել ուշ, մի քանի ամսից, կոմ մի քանի տարուց հետո:

Ժառանգական սիֆիլիտը կարող է հայտնվել մինչև 18-19 տարեկան հասակը, դրանից ուշ չի պատճեռում:

## ԺԱՐԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ժառանգական սիֆիլիտով, կենդանի մնացած յերեխան լավ չի աճում, միշտ

հիվանդ է լինում՝ թե ֆիզիկապես և թե հոգեպես, դրանց մեծ մասը հոգեկան հիվանդություններ են ստանում, աշխատելու ընդունակ չեն և ապրում են իրենց ազգականների կամ պետության հաշվին, վորովհետեւ ընդունակ չեն բնքնուրսւն կյանք վարելու:

Շատ հաճախ այդ տեսակ հիվանդները հարթեցող են գասնում կամ մի ուրիշ ախտամոլ, մանավանդ բարոյական տեսակետից, նրանք հակումն են ունենում գեղի անառակությունն ու անբարոյականությունը: Յուրաքանչյոր իիվանդ պիտք է ունենա զիտակցություն՝ ըստ թողելու սիֆիլիտով իիվանդ ժառանգներ:

Յուրաքանչյուր հիվանդ պետք է ունենա զիտակցությունն նախ քան ամսանանալը լավ բժշկվել ու հետո ամուսնանալը. և իրոք ավելի լավ ե

Համուսնանեալ, քոն ունենալ ժառանգական սիֆիլիսով հիվանդ զավակներ, փորոնք ապազայում դառնեալու յեն ըեռ ծնողների, հասաբակության յիշ պետության համար:

Յուրաքանչյուր հիվանդ պետք է հասկանա, վոր իր կողմից մեծ հանցագործություն ե զեղի իր ժառանգը, յնը նա հիվանդ է ծնվում. ինչով ե մեղափոր ժառանգը, յերբ նրա անզիտակից ծնողները տվել են նրան սիֆիլիս:

Սիֆիլիսով հիվանդ խելացնորը, ապուշը, բարոյապես ընկածն ամենեվին մեղափոր չե. նաև ապագործ ծնողներն են, վոր սիֆիլիս են տվել իրենց ժառանգին:

## ԻՆՉՊԵՍ ԶԳՈՒՇԱՆԱԼ ՄԻԳԻԼԻՄԻՑ

### I ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

- 1) Գրագիտություն,  
Սիֆիլիսի ամենամեծ թշնամին

զիտությունն ե. վորքան շատ լուսավորված, վորքան շատ կրթված ե մի ազգ, այնքան քիչ կան նրա մեջ սիֆիլիսով հիվանդներ:

Տգիտության շնորհիվ ե տարածվում սիֆիլիսը. զրողերում արտասեռական սիֆիլիսի տարածման պատճեանը տգիտությունն ե:

Յուրաքանչյուր զրադեալ պետք ե իմանա ինչ բան է սիֆիլիսը, վորտեղից ե նա ծագում, ինչպես ե անցնում հիվանդից առողջին, ինչպես ե նա անցնում ժառանգաբար, ինչպիսի ընթացք ունի և ինչ նետեանքներ ե տալիս նա:

Գրագեալը գիտե, վոր սիֆիլիսը կարելի ե ստանալ և վոչ սեռական հարաբերության միջոցով, վոր սիֆիլիսը կենցաղային հիվանդություն ե, նա կաշվատի զգուշանալ և նեռու մնալ այն ամենից՝ ինչ կասկածելի յե:

Տգետը վախենում է հասարակ  
բանից, բայց ուշադրություն չի  
դարձնում լուրջ հիվանդության վրա:

Գրագետը, վորնունի հասկացողու-  
թյուն սիֆիլիսի մասին՝ ի վիճակի կը  
լինի ջոկել խռկականը հասարակից և  
փառնդավորը անվտանդից:

2) Պայքար պոտելության դեմ:

Սիֆիլիսի յեզ առհասարակ վեճե-  
րական ախտերի զիխավոր աղբյուրը  
պոտելությունն եւ դաշտնի և հայտնի:  
Անգործ կանայք և անհապաստան յերե-  
խաները, անտեսական սուր պայմաննե-  
րից ստիպված, կարիքից ստիպված,  
դուրս են գալիս փողոց հաց աշխա-  
տելու ու իրենց գոյությունը պահպա-  
նելու համար ծախում են իրենց մար-  
մինը: Իսկ այդ արհեստի անբաժան  
ընկերը վեճերուկան տիստերն են: Պոռնը-  
կության դեմ մղվող պայքարի մեջ

առաջին շեղը բռնում է անգործ կա-  
նանց և անապատան յերեխաների  
խնամատարությունը. վորպես զի հացի  
համար փողոց չը նետվեն, պետք է  
խնամել նրանց և գործի դնել:

3) Պայքար արբեցողության դեմ:

Սիֆիլիսի յեզ առհասարակ վեճերա-  
կան ախտերի զիխակիցը, ողնականը  
արբեցողությունն եւ: Արբեցողը շատ  
անվայել քայլեր ե անում: Վեճերական  
ախտերով մեծ մասամբ վարակվում են  
արբած ժամանակ, ուստի պետք ե լուրջ  
կերպով կովել արբեցողության դեմ:

4) Պայքար սեռական սանձարձակութ-  
յան դեմ:

Սեռական ազատությունը յերբեմն  
սանձարձակության և համում: Սեռա-  
կան կյանքը շատ վաղ են սկսում, մինչև  
անգամ վոչ հասունացածներն ունենում  
են հաճախակի հարաբերություն: Ունե-

հում են հարաբերություն մինչև անզամ  
պոռնիկների հետ և վարակվում ամեն  
տեսակ ախտով. դրա գեմ կովելու հաշ-  
մար հարկավոր և դպրոցներում յերկու-  
սեփ միասեղ աւառմը սկսել շատ  
փոքր հասակից. ուսումնարանի բարձր  
դասարաններում և բարձրագոյն դպրոց-  
ներում պիտի բուրջ ուշագրաւթյուն  
դարձնել սեռական կրթության վրա:

## II ԱՆՁՆԱԿԱՆ ԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Այս միջոցները կայանում են չորս  
պատվերի մեջ, և յուրաքանչյուր դրա-  
գետ պետք և մաքին պահի հետեւալ  
չորս պատվերները:

1) Յեղիք ժուժկալ մինչեւ ամուս-  
նությունդ:

2) Յեղիք մաքուր ամուսնությու-  
նիցդ հետո:

3) Յեղիք զգուշ սիֆիլիսով վարակ-  
վելուց:

4) Յեղիք զիտակից՝ բժշկվիք, յեթե  
հիվանդ ես և ուրիշն մի վարակիք:  
Անձնական զգուշության համար  
անհրաժեշտ ե սեռական յուրաքան-  
չյուր հարաբերությունից հետո լավ  
լվանալ սեռական գործարանները սա-  
պոնով, թեկուզ սառը ջրով:

Յեթե յուրաքանչյուր մարդ զեկա-  
վարվի սրանցով այն ժամանակ սիֆի-  
լիսը գոյություն չի ունենա:

## III ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ ԶԳՈՒ- ՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սիֆիլիսով հիվանդ հղի կանայք  
պետք և բժշկվեն հղի ժամանակ, վոր  
առողջ յերեխա ծնեն:

Հղի կինը բժշկվելիո՞ւ բժշկվում և  
արգանդի մեջ և նրա զավակը: Սիֆի-  
լիսի դեմ զործ զրված ճարերը հղի  
կնոջ այրան միջով անցնում են արգան-

զի մեջ գանվող դաշտակին ու նրան ևս  
բժշկում:

## IV ԱՐՏԱՍԵՌԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ ԶԳՈՒՇԱ- ԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ինչպես վերն առացինք, սիֆիլիսն  
անցնում է և վոչ սեռական ուղիով. այդ  
հարցում մեծ նշանակություն ունի  
ազգաբնակչության նիստն ու կացը:

### 1) ՍԵՆՅԱԿ

Տնտեսական վատ զրությունից մեկ  
սենյակում ապրում են ավելի մարդ  
քան հարկավոր եւ:

Յեթե մեկ սենյակում ապրող բազ-  
մանգամ ընտանիքի անդամներից մեկն  
ու մեկը հիվանդ է սիֆիլիսով, ագիսութ-  
յան և նեղվածության պատճառով  
ախտը շատ շուտ տարածվում է և  
ուրիշների վրա:

Յուրաքանչուր հիվանդ ինքը պետք  
է գիտակցություն ունենա և գոռոշ  
լինի, վոր ուրիշներին չը վարակի:

### 2) ԱՆԿՈՇԻՆ, ՈՒՏԵԼԻՔ ՅԵՎ ԽՄԵԼԻՔ

Դյուղերում սովորություն կա, ընտա-  
նիքի բոլոր անդամները մի անկողնում  
են քնում, ուտում են մի ամանից, մի  
զգալով, խմում են մի բաժակից, համ-  
բուրում են հիվանդ յերեխաներին կամ  
հիվանդը համբուրում և առողջ յերե-  
խային, սրբվում են սեկ սրբիչութ- և  
այլն... և այս բոլորը նորաստում և  
սիֆիլիսի տարածմանը:

Բավական է մի զյուղում մի ընտա-  
նիք հիվանդ լինի ու այդ ընտանիքից  
ամբողջ զյուղը կարող է վարակվել:

Ահա կյանքից մի 2 որինակ.

1) մեկը գնում է մի զյուղ և հյուր  
մնում մեկի տանը, այդ հուրը հիվանդ

Ե սիֆիլիսով և այն ել ամենավարակիչ  
շըջանի. այդ հյուրը առանց հասկանա-  
լու, վոր իր հիվանդությունը վարակիչ  
է, համբուրում և տանտիրոջ յերեխա-  
ներին, կամ ուտում և բոլորի հետ մի  
գդալով, վորի վրա թողնում է իր թքի  
մի կաթիլը. նրանից հետո գդալը  
առանց լվալու ուտում են ուրիշները և  
վարակվում. նրա համբուրած յերեխա-  
ներն ել նույնպես վարակվում են. այս  
վարակվածներն ել վարակում են իրենց  
հարկաններին և այդպիսով ամբողջ  
զյուղը պլառվին վարակվում է սիֆի-  
լիսով:

2) Գյուղացու մեկը քաղաքում վա-  
րակվել է սիֆիլիսով և դեռ կարգին չը  
բժշկված, գնում է զյուղ. նա հենց  
առաջին որը կնոջն է վարակում ու  
հետո արաւասեռական ճանապարհով իր  
յերեխաներին. իսկ այդ ընտանիքից

վարակվելու յեն և մյուսները շնորհիվ  
իրենց անմաքրասիրության և ազի-  
տության:

### 3. ԳԼԱՆԱԿ, ԾԽԱՍՈՐՃ

Արտասեռական սիֆիլիսի տեսակե-  
տից մեծ նշանակություն ունի և ուրիշի  
կիսատ գլանակ ծխելը, կամ ծխա-  
մորճ (չիբուխ) քաշելը: Հիվանդը թող-  
նում է գլանակի կամ ծխամորճի վրա  
իր թքի կաթիլը, և անզիտակցաբար  
վարակում ուրիշ առողջին, վորը դրել  
և իր բերանը հիվանդի կիսատ գլանա-  
կը կամ նրա ծխամորճը:

Ուրեմն յուրաքանչուր գիտակից մարդ  
պետք է զգուշ լինի ուրիշի գլանակից,  
ծխամորճից, բաժակից, սրբիչից, գդա-  
լից, ամանից, անկողնուց, թաշկինա-  
կից ու շորերից:

Յուրաքանչուր մարդ պիտի իմանա,

վոր սիֆիլիսն անցնում ե վոչ թե  
միայն սեռական հարաբերության մի-  
ջնով, այլ և համբույրի, գդալի, բաժա-  
կի միջնով:

#### 4) ԿՐԵԲ

Բացի այդ, ամեն մարդ պիտի լավ  
խմանա, վոր սիֆիլիսն անցնում հիվան-  
դից առողջին և այլ իրերի միջնով,  
վորոնց վրա և ընկել սիֆիլիսով հիվան-  
դի թուքի կամ նրա թարտիսի մի կա-  
թիլը:

Ամեն մարդ պետք է շատ լավ խմա-  
նա, վոր թե սեռական ճանապարհով  
ստացած սիֆիլիսը, և թե վոչ սեռա-  
կան ճանապարհով ստացած սիֆիլիսը  
միևնույն ընթացքն ունեն, վոր յերկուսն  
ել վտանգավոր են, վոր նույնպես  
վտանգավոր ե և զանազան իրերի միջն-  
ով ստացած սիֆիլիսը:

Սիֆիլիսը մեկ և, վորովհետեւ ման-  
ընեն մեկ և:

Այդ պատճառով ել պետք է շատ զգուշ  
լինել և հսկել վոր յերեխաները բերանը  
չը գնեն զանազան խաղալիքներ, վորոնց  
վրա կարող ե ընկած լինել սիֆիլիսոտի-  
թուքի մի կաթիլը:

Նմանապես կար անող կանայք կատ-  
հյուսները չըպետք բերանը լինեն  
տակը, բորոց, մեխ և այլ իրեր...

Սիֆիլիսից զգուշանալու համար  
հարկավոր ե միշտ լավ լվանալ ու  
մարբել այն բոլորը, ինչի ձեռք և ավել  
մի ուրիշը, թեկուզ առողջը, առանց  
լվանալու չը խմել ուրիշի բաժակով,  
չուտել ուրիշի զղալով ուրիշի ամանից  
և այլն...

Մարդասեր ընտանիքում արտասեռա-  
կան սիֆիլիս չկա,

## ՍԻՖԻԼԻՍԻ ԲՈՒԺՈՒՄԸ

ՍԻՖԻԼԻՍԻ ԲՈՒԺԵԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Շատ վաղուց տարածված եր այն սխալ կարծիքը, վոր սիֆիլիսն անբուժելի ե, բայց գիտությունը ջախջախեց այդ սխալ կարծիքը. այժմ զբականապես հայտնի յե, վոր սիֆիլիսը բուժելի յե, միայն պետք ե բուժումը կատարել իր ժամանակին յեվ բառ պատշաճի:

Յուրաքանչյուր հիվանդ պետք ե լավ իմանա, վոր բուժելի յե սիֆիլիսը. նա չպետք ե բարձաթող անի իր տկարությունը և պետք ե աշխատի ամեն միջոց գործ գնել այդ ախտից ազատվելու համար:

Յուրաքանչյուր հիվանդ պետք ե բժշկվի՝ 1) իր կորցքած առողջությունը հետ բերելու համար, 2) իր հարազատներին յեվ մերձավորներին չը վարա-

կելու համար. յեվ 3) առողջ ժառանգներ ունենալու համար:

## ՏԵՎԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍ

Սիֆիլիսը յերկարատև հիվանդություն ե, յերկար ժամանակ ե պահանջում նրա բուժումը, ուստի հիվանդը պետք ե համբերություն ունենա բըժշկվելու համար:

Ով ժամանակին չի բժշկվում, ով կիսատ ե թողնում, ապագայում տուժում ե իր անփութության համար:

## I ՍԻՖԻԼԻՍԸ ԱՐԱՏ ԶԵ

Վոչ վոք չպետք ե փախչի սիֆիլիսով հիվանդից:

Սիֆիլիսը արատ չե, այլ հիվանդություն:

Սիֆիլիսով հիվանդը արատավոր չե, այլ գժրախտ, վորը վոչ թե անարգանքի

ե արժանի, այլ կարոտ ե կարեկցության և բժշկության:

## II ՎԱՂ ԲՈՒԺՈՒՄԸ

Սիֆիլիսի բուժումը պետք է լինի խօսա կանոնավոր, և պետք սկսել վարքան կարելի յե շուտ, հենց կոշտ շանկրից, վոր սպիրոխետները շատ չը տարածվեն մարմին մեջ և չը բազմանան. հիվանդը չը պետք է թաղցնի իր հիվանդությունը, չը պետք է ամոչի նո իր ախտից, այլ պետք է բժշկվելու:

Սիֆիլիսը շատ շուտ տեղի ե տալիս բուժմանը:

Վաշ մի հիվանդության նշաններ տիրապես շուտ չեն անհետանում բբժշկվելու, ինչպես սիֆիլիսինը:

Սիֆիլիսի մի նատկությունն ել դայի, վոր բժշկվելու նրանշանները շատ շուտ անցնում են. սպիրոխետները շատ շուտ

անհետանում են արյան միջից, յերբ սկսում են բժշկվելը, մանագանդ յերբ վարակվելու տեղից ու նրան մոտակա գեղձերից հեռու չեն գնացել նրանք:

Սրանից 20-25 տարի առաջ հակասիֆիլիսային հասուեկ բժշկություն սկըսում եյին միայն այն ժամանակ, յերբ հայտնվում եյին սիֆիլիսի յերկրորդ շրջանի նշանները:

Բայց զիտությունը և վերջին ատրիների ուսումնասիրությունները պարզեցին, վոր ինչքան շուտ սկսվի բժշկությունը, այնքան լավ: Յեվ այժմ բժշկությունը սկսում են հենց առաջին շրջանից՝ կոշտ շանկրի ժամանակ, յերբ սպիրոխետները՝ սիֆիլիսի մանրեները, շանկրից հեռու չեն ու քիչ են: Փորձերն ապացուցեցին, վոր յերբ կոշտ շանկրի ժամանակ են սկսում հակասիֆիլիսային բժշկությունը, հիվանդության

յերկրորդ արջանը չի հայտնվում և յերբ-  
քեմն ամբողջ բժշկությունը հենց մի  
ամսում ել վերջանում է:

## ՍԻՖԻԼԻՍԻ ԴԵՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՄԻԶՈՑ- ՆԵՐԸ

Դեռ շատ վաղուց հայտնի եր սըն-  
դիկ (սուլեմի) ազգեցությունը սիֆի-  
լիսի վրա. սկզբներում ծուխ եյին տա-  
լիս հիվանդներին. այժմ ել հեքիմներն  
այսպես են բժշկում, բայց այժմ այդ  
ձեզ թողել են և սնդիկը կաշվի տակ են  
ներարկում, կամ մկանների մեջ են  
սրսկում:

Մարդկային միտքը չը բավականա-  
ցավ դրանով և սիֆիլիսի բուժման  
հարցում նոր նվաճումներ արեց. այդ  
խնդիրը տարեց-տարի նոր նվաճում-  
ներ ե անում, այդ պատճառով ել  
այժմ սիֆիլիսը առաջվա պես անոնելի

հիվանդություն չե. այժմ նա ի վիճակի  
չե կոտորածներ անելու. այժմ նա  
լավ ուսումնասիրված ե և դանված են  
նրա դեմ արժատական միջոցներ:

Շատ ու շատ փորձեր են արված,  
շատ ճարեր են գտնված. կատարելա-  
գործված են թե ճարերը և թե նրանց  
գործելու ձեր, բայց սնդիկը մնացել  
ե դեռ իր պատվավոր տեղում:

## ՍՆԴԻԿ ՅԵՎ «914»

Այժմ սնդիկը մկանների մեջ կամ  
կաշվի տակ են ներարկում և արյան մեջ  
ել ներարկում են «914» (նեոսալվար-  
ուսն). մի ամիս այդպես բժշկելուց հե-  
տո 2 ամիս ընդմիջում են անում և  
նորից սկսում են բժշկությունը, վորը  
նույնազես մի ամիս ե տեսում. դրանից  
հետո ևս ընդմիջում. և այդպես ընդհա-  
տումներով մի քանի կուրս են անում:

Նատ ոգատակար ե և իսպը. սիֆիլիսով հիվանդը, մանավանդ յերբոքդ արքջանում, ընդունում ե իոդ, փորի չափը վորոշում ե բժիշկը:

### ՅԵՐԲ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՌՈՂՋԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼ ՃԻՎԱՆԴԻՆ

Վերջին տոեղից 3-4 տմիտ հետո արյունը տալիս են հետազոտության, յեթե արյան մեջ կան սիֆիլիսի հետքեր, նորից են սկսում բժշկությունը, իսկ յեթե չկան, սպասում են. մի քանի տմափց հետո նորից են տալիս արյունը հետազոտության: Մի քանի անդամ արյան քննությունից բացառական պատասխան ստանալուց հետո պետք է փողուղեղի հեղուկը տալ հետազոտության, յեթե վողուղեղի հեղուկի հե-

տազոտությունը դրական հետևանք է տալիս, պետք է շարունակել բժշկությունը, իսկ յեթե արյան կրկնակի հետազոտությունը, վողուղեղի հեղուկի հետազոտությունը բացառական հետեւանք են տալիս, այն ժամանակ կարելի յե հաստատապես տոել, վոր հիվանդն առողջացած ե և նա վոչ մի փտանգչի սպասնում իր շրջապատողներին: Այդ ժամանակ միայն նա կարող է առունենալ:

Ով բժշկվել է իր ժամանակին և կանոնավոր կերպով, նա կարող է ազատվել սիֆիլիսի ճանկերից. հակառակ դեպքում փրկություն չկա:

Սիֆիլիսը արատ չե, այլ հիվանդություն, վորը բժշկել է պահանջում և վոչ թագինել:

Ընթերցնել, չմոռանալ չորս պատվերները.

1) Յեղի՛ր ժումկալ սինչեղ ամուշ-  
նովյունդ:

2) Յեղի՛ր մաքուր ամուսնովյունիցու  
հետո:

3) Յեղի՛ր զգույշ սիֆիլիսով վարակ-  
վելոց:

4) Յեղի՛ր զիտակից՝ քժշկվի՛ր, յեթե  
հիվանդ ես յեկ ուրիշին մի՛ վարակիր:



«Ազգային գրադարան



NL0285622

7500/3

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.